



Մեպտեմբերի 11, 2018թ.

Knight Piesold and Co.

1999 Broadway, Ste 600
Denver, CO 80202-5706

Մեմ Ուոքեր, ավագ բնապահպանական
խորհրդատու
Վերակառուցման և զարգացման եվրոպական
բանկ (ՎՋԵԲ)
One Exchange Square,
London EC2A 2JN, UK

T +1 303 629 8788
E denver@knightpiesold.com
www.knightpiesold.com

Project No.: DV602-00010/09

Doc. No.: DV-18-1014

Պատասխան՝ Ամուլսարի Ոսկու Հանքի Ծրագիր, Հայաստան

Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատու (IESC) կազմակերպության իրականացրած աուդիտի արդյունքները և Ծրագրի համապատասխանությունը միջազգային փոխատուների պահանջներին - Տարբերակ1

Հարգելի պր. Ուոքեր,

Սույն նամակում ամփոփ ներկայացված է Լիդիանի՝ Ամուլսարի Ծրագրի ներկայիս կարգավիճակը միջազգային փոխատուների պահանջներին համապատասխանության առումով: Նամակը ներկայացնում է մեր դերը որպես Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատու և մեր մասնակցությունը Ծրագրում, ինչպես նաև ամփոփում է Ծրագրի նկատմամբ միջազգային փոխատուների պահանջները և մեր անկախ եզրակացությունը այդ պահանջներին Ծրագրի ներկայիս կարգավիճակի համապատասխանության վերաբերյալ:

1.0 ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2014թ. Knight Piesold and Co. (այսուհետ՝ Knight Piesold) ընկերությունը Endeavour Financial Limited (այսուհետ՝ Endeavour) ընկերության կողմից հրավիրվել է որպես Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթիդ (Lydian International Ltd.) ընկերության հայաստանյան Ամուլսարի Ծրագրի

(այսուհետ՝ Ծրագիր) ներդրողների համար Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատու (IESC): Endeavour ընկերությունը, որն այդ ժամանակ հանդիսանում էր Լիդիանի ֆինանսական խորհրդատուն, հանդես էր գալիս ապագա ներդրողների խմբի անունից՝ Wardell Armstrong International (WAI) ընկերության կողմից պատրաստված Ծրագրի Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՄԱԳ) անկախ ուսումնասիրությունը սկսելու նպատակով: Փոխատուների ներկայիս խմբում ընդգրկված են հետևյալ ընկերություններն ու կազմակերպությունները. Orion Mine Finance (Orion), RCF Management LLC (RCF) ընկերության կողմից կառավարվող Resource Capital Funds VI L.P. ընկերությունը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ), ING, և EKN.

Որպես Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատու Knight Piésold ընկերության լիազորությունների մեջ է մտնում.

- Գնահատել համապատասխանությունը բնապահպանական, սոցիալական, առողջապահական և աշխատանքի անվտանգության պահանջներին՝ Էկվատորի (հավասարության) սկզբունքներին, Միջազգային ֆինանսական կորպորացիայի Կատարողական Ստանդարտներին (ՄՖԿ ԿՍ), ՎԶԵԲ-ի Կատարողական Պահանջներին (ԿՊ), միջազգային արդյունաբերական լավագույն փորձին և փոխատուի Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլանին համապատասխան:
- Գնահատել վերոնշյալ պահանջների հետ կապված ԲՄԱԳ-ի v10 տարբերակի շրջանակներում մշակված Ծրագրի Պարտավորությունների գրանցամատյանի (ՊԳ) (հավաքական՝ «ծրագրի պարտավորություններ») համապատասխանությունն ու արդյունավետությունը:
- Զեկուցել կատարված աշխատանքների և ցանկացած անհամապատասխանությունների, ինչպես նաև անհաժեշտության դեպքում բարելավման հնարավորությունների մասին:
- Բացահայտել բնապահպանական, սոցիալական, առողջապահական և աշխատանքի անվտանգության հետ կապված գործոններ, որոնք կարող են բացասական կերպով ազդել Ծրագրի հետագա իրականացման վրա:
- Բացահայտել Ծրագրի գործունեության հետ կապված սխալները, բացթողումները կամ այլ գործողություններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ փոխատուների բարի համբավի վրա կամ ընդհանրապես ծրագրի ֆինանսավորման ռիսկեր առաջացնել:



Ծրագրի պրոգրեսիվ երկրաբանահետախուզական փուլում Knight Piésold ընկերությունը հանդես էր գալիս որպես Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատու: 2014-ից 2016թթ ներառյալ Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատուն ավարտեց

ԲՄԱԳ-ի (Տարբերակներ 9 և 10) անկախ ուսումնասիրությունները և կազմեց չօգտագործված պաշարների վերլուծության հաշվետվություն և փոխատուների համար նախատեսված գործողությունների աղյուսակ այն ժամանակից ի վեր, երբ Ծրագիրն անցավ շինարարական փուլին: Շինարարական աշխատանքների մեկնարկը սկիզբ դրեց Ծրագրի տեղամասում ինտենսիվ աշխատանքների, և հետևաբար փոխատուները Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատուին պատվիրեցին իրականացնել աուդիտի լիարժեք ծրագիր շինարարական աշխատանքների և դեպի շահագործման փուլ անցման մոնիթորինգի համար: Մինչ այժմ իրականացված մոնիթորինգը ներառում է.

2017թ. Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատուի մոնիթորինգ

- Փուլ 1. Տվյալների ուսումնասիրություն և գրասենյակային պայմաններում փաստաթղթերի աուդիտ (ավարտվել է 2017թ. ապրիլին)
- Փուլ 2. Տեղամասի աուդիտ (ավարտվել է 2017թ. հունիսին)
- Փուլ 3. Կենսբազմազանության աուդիտ (ավարտվել է 2017թ սեպտեմբերին)
- Փուլ 4. Հողերի ձեռքբերման և Սոցիալական ծրագրերի աուդիտ (ավարտվել է 2017թ. հունիսին, իրականացվել է Փուլ 2-ին զուգահեռ)
- Փուլ 5. Ընթացիկ հիմնավորող աուդիտ (ավարտվել է 2017թ. դեկտեմբերին)

2018 Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատուի մոնիթորինգ

- Գարնանն իրականացված աուդիտ (ավարտվել է 2018թ. օգոստոսին)
- Աշնանն իրականացված աուդիտ (սպասվում է 2018թ. ավարտին)

Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատուի վերոհիշյալ լիազորությունների համաձայն, Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատուի յուրաքանչյուր աուդիտի արդյունքները կոնֆիդենցիալ կերպով ներկայացվում են փոխատուների խմբին, իսկ լրացուցիչ կոնֆիդենցիալ պատճենը՝ Լիդիանին: Այնուհետև Լիդիանը աշխատում է իրականացնել բոլոր հանձնարարականները մինչև Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատուի հաջորդ աուդիտը:

2.0. ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱԶԱ

Ծրագրի նորմատիվ-իրավական բազան ամփոփված է ԲՄԱԳ-ի Գլուխ 2-ում (Լիդիան, 2016թ.): Լիդիանը պարտավորություն է ստանձնել ապահովել Ամուլսարի Ծրագրի շինարարության, շահագործման ու փակման աշխատանքների համապատասխանությունը հետևյալ պահանջներին.

- ՀՀ օրենսդրություն, նորմեր, թույլտվություններ, հաստատող փաստաթղթեր և ռազմավարություններ,
- Միջազգային փոխատուների պահանջներ,
- Լիդիանի կորպորատիվ լիազորություններ, ընկերության ութ կորպորատիվ քաղաքականություններ, Վարվեցողության Կանոնագիրք և լավագույն փորձին համապատասխան աշխատելու պարտավորություններ,
- Միջազգային արդյունաբերական լավագույն փորձ, որը ներկայացնում է արդյունաբերական առաջատար փորձը:

Ինչպես նշված է Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատուի լիազորություններում, վերջինս համեմատում է Բնապահպանական, սոցիալական, առողջապահական և աշխատանքի անվտանգության ցուցանիշները կոնկրետ փոխատուի պահանջների հետ, հատկապես հետևալ պահանջների.

- **Էկվատորի (հավասարության) սկզբունքներ** - Էկվատորի սկզբունքները (ԷՍ) ռիսկերի կառավարման գործողությունների շրջանակ է, որը կամավոր կերպով ընդունվում է ֆինանսական ինստիտուտների կողմից ծրագրերում բնապահպանական և սոցիալական ռիսկերը որոշելու, գնահատելու և կառավարելու նպատակով: Դրանց հիմնական նպատակն է ապահովել իրավավերլուծության և մոնիթորինգի նվազագույն չափանիշներ՝ ռիսկերին առնչվող պատասխանատու որոշումների կայացմանը աջակցելու նպատակով: ԷՍ ծրագրերի ֆինանսավորման ոլորտում մեծապես բարձրացրել է ուշադրությունը սոցիալական/համայնքային չափանիշների և պատասխանատվության, այդ թվում՝ տեղաբնակների համար կայուն չափանիշների ապահովման, աշխատանքային ստանդարտների և տեղական ազդակիր համայնքների հետ խորհրդատվության ապահովման նկատմամբ: Դրանք նաև խթանել են բնապահպանական և սոցիալական չափանիշների շուրջ ընդհանուր տեսակետի ձևավորման հարցում (Էկվատորի սկզբունք 2013). Էկվատորի տասը սկզբունքները թվարկված են ստորև Աղյուսակ 3-1-ում:
- **Միջազգային ֆինանսական կորպորացիայի Կատարողական ստանդարտներ** - Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Բնապահպանական և սոցիալական կատարողական ստանդարտները (ԿՍ) հանդիսանում են ՄՖԿ-ի Սոցիալական և բնապահպանական զարգացման հիմնական դրույթների մաս: Սոցիալական և բնապահպանական զարգացման դրույթները հստակ ցույց են տալիս ՄՖԿ-ի կայուն զարգացմանն ուղղված ռազմավարական պարտավորությունը և հանդիսանում են ռիսկերի կառավարման իր մոտեցման մի մաս: Սոցիալական և բնապահպանական զարգացման դրույթները խթանում են բնապահպանական և սոցիալական գործունեության լավագույն փորձը, թափանցիկությունն ու հաշվետվորողականությունը, ինչպես նաև աջակցում

զարգացման դրական ազդեցությանը: ԿՍ դարձել է համաշխարհային ճանաչված օրինակելի չափորոշիչ մասնավոր հավածում բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման ոլորտում: ԿՍ սահմանում է ընկերության բնապահպանական և սոցիալական ռիսկերը կառավարելու պարտականությունները: ԿՍ իրականացմանը աջակցում են տարբեր ուղղեցույցներ, միջազգային լավագույն արդյունաբերական փորձի ուղղեցույցը և տեխնիկական տեղեկատուները (ՄՖԿ, 2012): Ութ Կատարողական Ստանդարտները թվարկված են ստորև՝ Աղյուսակ 3-1-ում:

- **Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Կատարողական պահանջներ** – ՎՁԵԲ-ի կողմից ֆինանսավորվող պրոեկտները պետք է նախագծվեն և շահագործվեն կայուն զարգացման միջազգային լավագույն փորձի համաձայն: ՎՁԵԲ-ը ստեղծել է Կատարողական պահանջներ (ԿՊ), որոնք վերաբերում են սոցիալական և բնապահպանական հարցերի և աղեցությունների հիմնական ոլորտներին: ԿՊ-ները լավ հիմք են հանդիսանում ընկերությունների համար՝ իրենց բիզնեսների շահագործման կայուն զարգացումն ապահովելու հարցում: Համաձայն ԿՊ-ների, ծրագիրը չպետք է բացասական ազդեցություն ունենա աշխատողների, համայնքների և շրջակա միջավայրի վրա: Եթե նման ազդեցությունն այնուամենայնիվ անխուսափելի է, բացասական ազդեցությունները պետք է նվազեցվեն, մեղմացվեն կամ փոխհատուցվեն, ըստ անհրաժեշտության: ՎՁԵԲ-ը նաև պահանջում է, որ նոր կառույցները կամ բիզնես գործունեությունը, որը ֆինանսավորվում է ՎՁԵԲ-ի կողմից նախագծվի այնպես, որպեսզի համապատասխանի ԿՊ-ներին ի սկզբանե (ՎՁԵԲ, 2014): Թվով տասը ԿՊ-ները ներկայացված է են ստորև՝ Աղյուսակ 3-1-ում:

3.0. ԾՐԱԳՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ – ԳԱՐՈՒՆ 2018Թ.

Տարբեր փոխատուների պահանջներին համապատասխանության ապահովումն ընթացիկ գործընթաց է: Լիդիանը ներկայացրել է նորմատիվ-իրավական բազային համապատասխանելու իր պարտավորությունը Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատուի յուրաքանչյուր աուդիտին ներկայացվող տվյալների միջոցով: Թեև Ծրագիրն ունի ընթացիկ գործողություններ և իրականացման գործընթացում գտնվող ծրագրեր, Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատուն գտնում է, որ Ծրագիրն արդեն իսկ էապես համապատասխանում է փոխատուների պահանջներին:

Աղյուսակ 3-1-ում ներկայացված է Ծրագրի համապատասխանությունը փոխատուների պահանջներին Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատուի կոմից 2018թ. գարնանն իրականացված աուդիտի արդյունքների դրությամբ:

Աղյուսակ 3-1. Համապատասխանությունը Փոխատուների Պահանջներին (2018թ. գարնանն իրականացված աուդիտի դրությամբ)

Առարկա	Էկվատորի սկզբունքներ III(ԷՍ)	ՄՖԿ-ի Կատարողական ստանդարտներ (ԿՍ)	ՎՋԵԲ-ի Կատարողական պահանջներ	Էական համապատասխանություն
Ծրագրի դասակարգում	Սկզբունք 1	Վերաբերում է բնապահպանական/սոցիալական ռիսկեր պարունակող ծրագրերին	ԿՊ-1	ԱՅՈ
Ծրագրի ազդեցություն և ռիսկի գնահատում	Սկզբունք 2	ԿՍ-1	ԿՊ-1	ԱՅՈ
Կառավարման համակարգեր և ոլորտին հատուկ գործողությունների պլաններ	Սկզբունք 4	ԿՍ-1	ԿՊ-1	ԱՅՈ
Չափանիշներ, արդյունավետություն և աղտոտման կանխարգելում	Սկզբունք 3	ԿՍ-3	ԿՊ-3	ԱՅՈ
Աշխատուժ և աշխատանքային պայմաններ		ԿՍ-2	ԿՊ-2	ԱՅՈ
Համայնքային առողջություն և անվտանգություն		ԿՍ-4	ԿՊ-4	ԱՅՈ
Հողի ձեռքբերում, ոչ կամավոր տարաբնակեցում և տնտեսական կայուն դիրքի կորուստ		ԿՍ-5	ԿՊ-5	ԱՅՈ
Կենսաբազմազանության և բնական ռեսուրսների կառավարում		ԿՍ-6	ԿՊ-6	ԱՅՈ
Տեղաբնակներ		ԿՍ-7	ԿՊ-7	Կիրառելի չէ
Մշակութային ժառանգություն		ԿՍ-8	ԿՊ-8	ԱՅՈ
Շահագրգիռ կողմերի ներգրավում	Սկզբունք-5	ԿՍ-1,5,6,7,8	ԿՊ-1,5,8,10	ԱՅՈ
Գանձատարկման մեխանիզմ	Սկզբունք-6	ԿՍ-1,2,5	ԿՊ-2,5,7,10	ԱՅՈ

Անկախ ուսումնասիրություն	Սկզբունք-7			ԱՅՈ
Ֆինանսական միջնորդներ			ԿՊ-9	Կիրառելի չէ
Պայմանագրային պարտավորություններ	Սկզբունք-8			Կիրառելի չէ
Անկախ մոնիթորինգ և հաշվետվություն	Սկզբունք-9			Կիրառելի չէ
Հաշվետվություն և թափանցիկություն	Սկզբունք-10			Կիրառելի չէ

3.1. ԱՆԿԱԽ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՒՄԲ

ԲՄԱԳ-ով ստանձնած պարտավորության համաձայն, Լիդիանից պահանջվում էր կազմել Անկախ խորհրդատվական խումբ (ԱԽԽ): ԱԽԽ-ը գործում է Անկախ բնապահպանական և սոցիալական խմբից առանձին և անկախ: ԱԽԽ-ն կիրառում է «բաց դռների» մոտեցում հիմնված Ծրագրի տեղամասին մոտ գտնվող համայնքների, հասարակության տարբեր խմբերի, գիտնականների, կառավարության ներկայացուցիչների, միջազգային ինստիտուտների, տեխնիկական մասնագետների և Լիդիանի աշխատակիցների հետ շփումների վրա: Դա թույլ է տալիս անկախ և անկողմնակալ կարծիք կազմել Ամուլսարի Ծրագրի սոցիալական և բնապահպանական ազդեցությունների կառավարման և Լիդիանի կողմից իր պարտավորությունների կատարման վերաբերյալ:


ԱԽԽ-ի առաջին տարեկան հաշվետվությունը ներկայացվել է 2018թ. մայիսին և նրանց տվյալները մեծ մասամբ հանրնկնում էին Անկախ բնապահպանական և սոցիալական խմբի տարբեր աուդիտների տվյալների հետ: Անկախ բնապահպանական և սոցիալական խումբը և Անկախ խորհրդատվական խմբի անդամները երբևիցե կապ չեն ունեցել և չեն քննարկել համապատասխանության կամ Ծրագրի պարտավորությունների իրականացման հարցերը:

4.0 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն նամակում ամփոփ ներկայացվում է մեր դերը որպես Ամուլսարի Ծրագրի Անկախ բնապահպանական և սոցիալական խորհրդատու և մեր կարծիքը Ծրագրի պահանջների համապատասխանության ներկայիս վիճակը: Քանի որ, մենք Ամուլսարի Ծրագրում ներգրավվել են 2014թ, մեր անկախ աուդիտները շարունակաբար գրանցել են Լիդիանի համապատասխանությունը փոխատուների ակնկալիքներին և արդյունաբերական լավագույն փորձին, ինչպես նաև այն փաստը, որ ընկերությունը շարունակում է հավատարիմ մնալ իր միջազգային

մակարդակի բնապահպանական և սոցիալական տեսանկյունից
պատասխանատու հանքի շահագործմանը:

Հարգանքով՝ Knight Piésold and Co.



Քարթին Շումաքեր

Բարբրա Ֆիլաս, Պ.Ե.

Ծրագրի գլխավոր ինժեներ

Ծրագրի գործադիր ղեկավար

Կցված փաստաթղթեր՝ չկան

Պատճեններ՝

Orion: Istvan Zollei and Nate Abebe

EBRD: Sarah Ruck

RCF: Allison Forrest, Justin Anderson, and Temuulen Tumurbat

Lydian International: Rodney Stuparyk, Armen Stepanyan, Adrian Milton, and Alan Blakemore

IESC Team: Barbara Filas, Catherine Schumacher, Steven Lange, Edward Pollett, and Jared Hardner

G:\602\00010.09\Deliverables\Letters\LenderConformance\Rev1\Text\LenderConformanceLetter_Rev1.docx

ՀՂՈՒՄՆԵՐ

International Finance Corporation (IFC), 2012, *Performance Standards on Environmental and Social Sustainability*, January

Equator Principles, 2013, *The Equator Principles III*, June

European Bank for Reconstruction and Development (EBRD), 2014, *Performance Requirements*

Լիդիան Ինթերնեյշնլ, 2016թ. Ամուլսարի Ծրագիր, Բնապահպանական և սոցիալական
ազդեցությունների գնահատում, հունիս